Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1912 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1587 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքից ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով՝ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով (այսուհետ՝ ավտոբուսներ) իրականացվող միջպետական հաղորդակցություններում ուղևորների և ուղեբեռների կանոնավոր ուղևորափոխադրումների (այսուհետ՝ միջպետական ուղևորափոխադրումներ) կազմակերպման և իրականացման գործընթացը:

II. ԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

2. Սույն կարգի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ փոխադրողներ) վրա:

3. Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ուղևորափոխադրումները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կարգի, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխան: Եթե միջազգային համաձայնագրերով սահմանված են այլ նորմեր,

քան նախատեսված են սույն կարգով, ապա կիրառվում են միջազգային համաձայնագրերի նորմերը:

III. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրում՝ պետությունների միջև այլ պետությունների տարածքների տարանցումով կամ առանց տարանցման ուղևորների ու ուղեբեռների փոխադրում, որն իրականացվում է իրավասու մարմինների հետ համաձայնեցված երթուղու ուղեգծով, չվացուցակով և ուղևորների ու ուղեբեռների համար սահմանված փոխադրավարձով.

2) ուղևորների կապանցիկ փոխադրում՝ ուղևորների փոխադրում, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և այլ պետության միջև, մեկ այլ պետության տարածքի տարանցմամբ, որի երթուղու սկզբնակետը և վերջնակետը գտնվում են տարանցվող պետության տարածքից դուրս.

3) թույլտվություն՝ իրավասու մարմինների կողմից տրվող փաստաթուղթ, որն իրավունք է վերապահում իրականացնելու տվյալ պետության տարածքով անցնող որոշակի երթուղով ուղևորների և ուղեբեռների կանոնավոր փոխադրում.

4) պատիրեր՝ Հայաստանի Հանրապետության և այլ պետության փոխադրողների կողմից ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղու սպասարկման համահավասար պայման.

5) ուղեգրում՝ ավտոբուսից օգտվելու ուղևորի իրավունքը հավաստող փաստաթուղթ:

5. Սույն կարգում օգտագործվող մյուս հասկացություններն ունեն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նշված նշանակությունները:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում սույն կարգի իմաստով լիազոր մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

IV. ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիները կազմակերպվում են նախարարության և այլ պետության իրավասու մարմնի փոխհամաձայնությամբ:

8. Մինչև միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների ցանկը և մրցույթի անցկացման ժամանակացույցը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի (այսուհետ՝ նախարար) կողմից հաստատվելը՝ նախարարությունը միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների չվացուցակները և ուղեգծերը համաձայնեցնում է այլ պետությունների իրավասու մարմինների հետ:

9. Հայաստանի Հանրապետության տարածքից (տարածքով) միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացվում են նախարարության կողմից այլ պետության փոխադրողին և այլ պետության իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության փոխադրողին տրված թույլտվությունների հիման վրա: Միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում փոխադրողներին տրվում են նաև տարանցվող պետությունների իրավասու մարմինների թույլտվություններ:

10. Երթուղու հաստատված չվացուցակի, ուղեգծի, փոխադրավարձի և կանգառների ցանկացած փոփոխություն իրականացվում է երթուղու սպասարկման համար թույլտվություն տված իրավասու մարմինների հետ նախապես գրավոր համաձայնեցվելուց հետո:

11. Միջպետական կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսները պետք է ապահովեն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և միջազգային համաձայնագրերով սահմանված չափի ուղեբեռների փոխադրումը:

12. Ավտովարորդի աշխատանքային հերթափոխի՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմատիվային տևողությունը գերազանցող միջպետական երթուղիների սպասարկումը պետք է կազմակերպվի մեկից ավելի վարորդներով:

13. Միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ավտոբուսի կառուցվածքով նախատեսված տեղում պետք է փակցված լինի երթուղու սկզբնակետի և վերջնակետի անվանմամբ հայերենով և անգլերենով գրված ցուցատախտակ:

14. Միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումն իրականացվում է միայն ուղետոմսի հիման վրա:

15. Միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող վարորդը պետք է ունենա տվյալ ավտոբուսը վարելու համապատասխան, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վարորդական իրավունքի միջազգային վկայական:

16. Միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնելիս ավտոբուսի վարորդն իր մոտ պետք է ունենա թույլտվության (պահանջվելու դեպքում նաև տարանցման թույլտվության), ճանապարհային թերթիկի բնօրինակներ, երթուղու հաստատված չվացուցակի, ուղեգծի և փոխադրավարձի վերաբերյալ փաստաթղթեր:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Նախարարության աշխատակազմը՝

1) նախապատրաստում և նախարարի հաստատմանն է ներկայացնում միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների ցանկը և մրցույթների անցկացման ժամանակացույցը.

2) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցույթները.

3) համաձայն հաստատված ժամանակացույցի տալիս է հայտարարություն մրցույթների անցկացման մասին՝ համաձայն N 1 ձևի.

4) տրամադրում է մրցութային փաթեթը ցանկություն հայտնած փոխադրողին.

5) ընդունում է ներկայացված հայտերը՝ ուսումնասիրելով դրանցում ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը N 1 ձևով սահմանված մրցույթի մասնակցության անհրաժեշտ փաստաթղթերի (այսուհետ՝ անհրաժեշտ փաստաթղթեր) ցանկին: Թերություններ հայտնաբերելու դեպքում հայտն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում հայտատուին.

6) մասնակցության հայտերի ընդունումը դադարեցնում է մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ.

7) մրցույթի անցկացման նախորդող աշխատանքային օրն ավտոբուսների գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամներին տեղեկացնում է մրցույթի անցկացման վայրի, ժամի մասին և ընդունված հայտերով ներկայացված ավտոբուսների քանակին համապատասխան տրամադրում ավտոբուսների արտաքին տեսքի և ուղևորասրահի գնահատման թերթիկները՝ համաձայն N 4 ձևի.

8) իրականացնում է հայտով ներկայացված ավտոբուսների պատկանելիության և տարիքի գնահատում՝ համաձայն N 5 ձևի՝ ներառելով N 4 ձևով ներկայացված գնահատականները, ինչպես նաև վարորդների աշխատանքային փորձի և կազմակերպության կողմից թույլ տրված խախտումների առկայության գնահատում՝ համաձայն N 6 ձևի՝ ըստ N 3 ձևի չափորոշիչների.

9) ամփոփում և նախարարի հաստատմանն է ներկայացնում մրցույթի արդյունքները՝ համաձայն N 7 ձևի.

10) հաջորդող տարվա համար նախատեսված թույլտվությունների փոխանակումից հետո Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին (ինչպես նաև հետագա փոփոխությունների վերաբերյալ) տրամադրում է տեղեկատվություն՝ համաձայն N 9 ձևի:

18. Մրցութային փաթեթը տեղադրվում է նաև նախարարության ինտերնետային կայքում և ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

1) մրցույթին ներկայացված երթուղու չվացուցակ.

2) երթուղու ուղեգիծ.

3) մրցույթի մասնակցության հայտը՝ համաձայն N 2 ձևի:

19. Մրցույթի արդյունքում հաղթող չլինելու կամ մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում հայտարարվում է կրկնակի մրցույթ:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

20. Մրցույթների անցկացման մասին տեղեկատվությունը հրապարակվում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, www.azdarar.am ինտերնետային կայքում, զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև նախարարության ինտերնետային կայքում՝ մրցույթի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

21**.** Անհրաժեշտության դեպքում նշվում են նաև երթուղին սպասարկող ավտոբուսներին համաձայնագրի կողմ պետության (տարանցման դեպքում նաև տարանցվող պետության) օրենսդրությամբ ներկայացվող պահանջները (դրանց առկայության դեպքում):

VII. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ

22. Հայտատուի կողմից մրցույթի մասնակցության համար ներկայացրած հայտը մուտքագրվում է նախարարության կողմից: Սույն կարգի պահանջներին համապատասխա-

նելու դեպքում հայտը նախարարության աշխատակազմի կողմից հաշվառվում է հայտերի գրանցամատյանում՝ համաձայն N 8 ձևի:

23. Հայտնաբերված թերությունների վերաբերյալ ծանուցվելուց հետո հայտատուն կարող է վերացնել դրանք մինչև մրցութի անցկացման նախորդող օրվա ժամը 12^{00}-ն:

24. Հայտատուն մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն իր դիմումի համաձայն կարող է փոխել կամ հետ վերցնել ներկայացված հայտը:

25. Սույն կարգի 17-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջին համապատասխան ժամկետում թերությունները չվերացված, ինչպես նաև հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո ներկայացված նոր հայտերի քննարկվումը մերժվում է, որի մասին 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ էլեկտրոնային նամակով տեղեկացվում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

VIII. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

26. Մրցույթին կարող են մասնակցել սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրած այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն՝

1) սեփականության և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման իրավունքով իրենց պատկանող՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվառված ավտոբուսներ.

2) ուղևորների երաշխավորված սպասարկման համար անհրաժեշտ թվով պահուստային ավտոբուսներ (սահմանվում է երթուղու սպասարկման համար անհրաժեշտ յուրաքանչյուր մեկից երեք ավտոբուսի դեպքում՝ մեկ պահուստային ավտոբուս):

27. Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է նույնիսկ մեկ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

IX. ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

28. Ավտոբուսների արտաքին տեսքի և ուղևորասրահի գնահատումն իրականացվում է նախարարի հրամանով ստեղծված, 5 անդամից բաղկացած հանձնաժողովի կողմից:

29. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մրցույթի ներկայացված ավտոբուսների փաստացի գնահատումը կատարում է գնահատման թերթիկում՝ համաձայն N 4 ձևի՝ ըստ N 3 ձևի չափորոշիչների:

30. Տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության կտրոնի բացակայության կամ ժամկետանց կտրոնի առկայության դեպքում տրանսպորտային միջոցն ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:

31. Մրցույթի ավարտից անմիջապես հետո գնահատման թերթիկները հանձնվում են նախարարության աշխատակազմին:

X. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

32. Հանձնաժողովի աշխատանքի արդյունքները նախարարության աշխատակազմն ամփոփում է գնահատման ամփոփ-թերթիկում՝ համաձայն N 7 ձևի:

33. Գնահատման արդյունքներով (ըստ ամփոփ-թերթիկի) 50 միավորից ցածր միջին գնահատական ստանալու դեպքում կազմակերպությունը զրկվում է երթուղու սպասարկման իրավունքի մրցակցությունից:

34. Առավելագույն ընդհանուր միավորներ հավաքած մասնակիցը ճանաչվում է մրցույթի հաղթող:

35. Մրցույթի արդյունքներով ընդհանուր հավասար միավորներ հավաքելու դեպքում մրցույթի հաղթողի նախապատվություն է տրվում հետևյալ առաջնահերթությամբ, երբ՝

1) ցածր է ուղևորների և ուղեբեռների առաջարկված փոխադրավարձը.

2) կազմակերպությունը նախկինում սպասարկել է տվյալ երթուղին:

36. Մրցութն անցկացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքներն ամփոփվում են և ներկայացվում նախարարի հաստատմանը:

XI. ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

37. Միջպետական միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետները սահմանվում են՝

1) 2 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 50-70-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում.

2) 3 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 70-80-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում.

3) 4 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 80-90-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում:

38. Միջպետական ավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետները սահմանվում են՝

1) 3 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 50-70-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում.

2) 4 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 70-80-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում.

3) 5 տարի ժամկետ՝ մրցույթի արդյունքում ընտրված ավտոբուսների 80-90-ը ներառյալ ընդհանուր միավորի ցուցանիշի դեպքում:

XII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

39. Մրցույթների արդյունքները նախարարի կողմից հաստատվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են նախարարության ինտերնետային կայքում և գրավոր տեղեկացվում մրցույթի մասնակիցներին:

XIII. ԵՐԹՈՒՂԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

40. Երթուղին սպասարկող կազմակերպությունը կարող է երթուղում ընդգրկված ավտոբուսի փոփոխման նպատակով դիմել նախարարություն և ներկայացված տրանսպորտային միջոցը սույն կարգի պահանջներին համապատասխան համարժեք գնահատվելու դեպքում դրանով փոխարինել երթուղում ընդգրկված ավտոբուսը:

XIV. ՉԿԱՅԱՑԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ

41. Մրցույթը հայտարարվում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի հայտ չի ներկայացվել.

2) մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված, հայտարարությամբ պահանջվող ավտոբուսներից որևէ մեկը չի բավարարում սույն կարգի 21-րդ կետի պահանջները:

XV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

42. Հաստատված ժամանակացույցի համաձայն անցկացված մրցույթում հաղթող չճանաչվելու կամ մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում մրցույթի անցկացման օրվանից 45 օր անց սույն կարգի պահանջներին համապատասխան անցկացվում է փոխադրողի ընտրության կրկնակի մրցույթ:

43. Կրկնակի մրցույթը չկայացված հայտարարվելու կամ անցկացված մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու դեպքում այլ պետության փոխադրողին իրավունք է վերապահվում երթուղու սպասարկումն իրականացնել միակողմանի և տրվում է համապատասխան թույլտվություն:

XVI. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

44. Հայաստանի Հանրապետության փոխադրողի ընտրության արտահերթ մրցույթն անցկացվում է սույն կարգի պահանջներին համապատասխան՝

1) Հայաստանի Հանրապետության փոխադրողի կողմից երթուղում ուղևորափոխադրողների դադարեցման մասին գրավոր ցանկություն հայտնելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության փոխադրողին «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան երթուղու սպասարկման իրավունքից զրկելու դեպքում**:**

45. Միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղով ուղևորափոխադրումների դադարեցման մտադրություն ունենալու դեպքում Հայաստանի Հանրապետության փոխադրողը նախարարությանը պետք է տեղյակ պահի ոչ ուշ, քան ուղևորափոխադրումների դադարեցումը նախատեսվելու օրվանից առնվազն երկու ամիս առաջ:

46. Սույն կարգի 44-րդ կետով սահմանված դեպքերում նախարարը դիմում է այլ պետության իրավասու մարմին՝ Հայաստանի Հանրապետության փոխադրողին տրված համապատասխան թույլտվությունը Հայաստանի Հանրապետության փոխադրողի դիմումում նշված կամ Հայաստանի Հանրապետության փոխադրողին երթուղու սպասարկման իրավունքից զրկելու օրվանից անվավեր ճանաչելու համար և դրա մասին տեղեկացնում փոխադրողին:

47. Արտահերթ մրցույթը չկայացած հայտարարվելու կամ անցկացված մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում մրցույթի անցկացման օրվանից 45 օր անց անցկացվում է ևս մեկ արտահերթ մրցույթ, որը չկայանալու կամ հաղթող չճանաչելու դեպքում այլ պետության փոխադրողին իրավունք է վերապահվում երթուղու սպասարկումն իրականացնել միակողմանի և երկու աշխատանքային օրվա ընթացքում տրվում է համապատասխան թույլտվություն:

48. Մինչև արտահերթ մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, անհրաժեշտության դեպքում, երթուղու սպասարկումը ժամանակավորապես (մինչև 3 ամիս), կարող է տրամադրվել կանոնավոր փոխադրումների լիցենզիա ունեցող սույն կարգի պահանջներին համապատասխան տրանսպորտային միջոցներ ունեցող, միջպետական կանոնավոր փոխադրումներ իրականացնող և մրցույթի արդյունքում առավել բարձր միավորներ ստացած կազմակերպությանը, ինչի մասին նախարարությունը տեղեկացնում է այլ պետության լիազոր մարմնին:

XVII. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

49. Միջպետական հաղորդակցության ավտոբուսներով ուղևորների կանոնավոր փոխադրումների հաշվառումն իրականացվում է նախարարության աշխատակազմի կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխադրողների կողմից տարվա յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 20-ը նախարարություն ներկայացվող հետևյալ տեղեկատվությունը՝

1) ըստ երթուղիների և օրերի՝ կատարված երթերի թիվը.

2) ըստ երթուղիների, երթերի և օրերի՝ փոխադրված ուղևորների թիվը:

50. Հայաստանի Հանրապետության տարածքից իրականացվող կանոնավոր միջպետական ավտոբուսային երթուղիների և դրանք սպասարկող փոխադրողների մասին ամփոփ տեղեկատվությունը հրապարակվում է նախարարության ինտերնետային կայքում:

XVIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

51. Ավտոբուսներով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների վերահսկողությունն իրականացվում է միջպետական ավտոմոբիլային հաղորդակցության մասին միջազգային համաձայնագրերի և այն պետությունների ազգային օրենսդրությունների հիման վրա, որոնց տարածքով իրականացվում է փոխադրումը:

Ձև N 1

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

_____ հայտարարում է ավտոբուսներով ուղևորների և ուղեբեռների կանոնավոր
(մրցույթ հայտարարող մարմնի անվանումը)

փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային երթուղիների համար՝

NN ը/կ	Երթուղու				
	անվանումը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.					
2.					
3.					

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1) հայտ.

2) ավտոբուսների հաշվառման վկայագրեր.

3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, աշխատանքային գրքույկներ.

4) ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.

5) սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման վկայական և ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման վկայական.

6) փակ ծրարով ներկայացվող՝ երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փոխադրման գինը.

7) տեղեկանք տարածքային հարկային մարմնից:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը _____

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը _____

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Ձև N 2

ՀԱՅՏ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայտատու _____
(կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, էլ. հասցեն)

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու ____ _____ 20 թ. կայանալիք ավտոբուսային (միկրոավտոբուսային)_____ մրցույթին:
(երթուղու անվանումը)

1. Ավտոբուսների մասին տվյալները՝

NN ը/կ	Մակնիշը	Հաշվառման համարանիշը	Վարորդների անունները, ազգանունները	Նստատեղերի թիվը	Ինչ իրավունքով է պատկանում կազմակերպությանը

2. Լրացուցիչ տեղեկություններ՝ _____
_____

Նախապես ծանոթացել եմ մրցութային կարգի պայմաններին և միջպետական ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող պահանջներին ու պարտավորվում եմ ապահովել դրանց կատարումը:

Կից ներկայացնում եմ մրցութային կարգի ցանկով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

Հայտատու _____ _____
(ստորագրությունը) (կազմակերպության ղեկավարի կամ լիազորված անձի անունը, ազգանունը)

Ձև N 3

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Գնահատման չափանիշները	**Գնահատականը**	**Ծանոթագրություն**
1	**2**	**3**
1. ԱՎՏՈԲՈՒՄ	50 միավոր	ամփոփվում է միջին գնահատականով
1) պարկանելության իրավունքը՝		
սեփականություն, լիզինգ	10	
վարձակալություն	5	
2) տարիքը՝		
մինչև 1 տարին ներառյալ	10	
1-ից 2 տարին ներառյալ	9	
2-ից 3 տարին ներառյալ	8	
3-ից 4 տարին ներառյալ	7	
4-ից 5 տարին ներառյալ	6	
5-ից 6 տարին ներառյալ	5	
6-ից 7 տարին ներառյալ	4	
7-ից 8 տարին ներառյալ	3	
8-ից 10 տարին ներառյալ	2	
10 և ավելի	1	
3) արտաքին տեսքը (թափքի կոռոզիա, ներկվածքի որակ, հողմապակու ճաքեր)		
գերազանց	10	
լավ (նշվածներից որևէ մեկի առկայության դեպքում)	8	
բավարար (նշվածներից երկուսի առկայության դեպքում)	4	
անբավարար (երեքի առկայության դեպքում)	0	
4) ուղևորասրահը (օդափոխման և տաքացման համակարգ, նստարանների, կողային պատասրոների և հատակի ծածկույթի վնասվածքներ, կառուցվածքային փոփոխություններ՝ ավելի նստատեղի և արտադրող գործարանի կողմից չնախատեսված այլ կառուցվածքային փոփոխություններ)		
գերազանց	10	
լավ (նշվածներից որևէ մեկի առկայության դեպքում)	8	
բավարար (նշվածներից երկուսի առկայության դեպքում)	4	
անբավարար (երեքի առկայության դեպքում)	0	
5) լրացուցիչ		գնահատվում է առկայությունը
փափուկ, ծալվող նստարաններ	2	
հեռուստացույց	2	
սառնարան	2	
խոհանոց	2	
զուգարան	2	

2. ՎԱՐՈՐԴՆԵՐ	10 միավոր	ամփոփվում է միջին գնահատականով
6) ողնորափոխադրումների ոլորտում վարորդների աշխատանքային փորձը		
մինչև 2 տարի	2	
2-ից 5 տարի	4	
5-ից 8 տարի	6	
8-ից ավելի	10	
3. ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	**30 միավոր**	հաշվի են առնվում մրցույթի օրվանից հաշվված վերջին մեկ տարվա խախտումները
7) լիցենզիայի պահանջների և պայմանների		նախկինում փոխադրող չհանդիսացող հայտատուն ստանում է 4 միավոր
խախտումների բացակայություն	10	
մեկ խախտում	5	
մեկից ավելի խախտումներ	0	
8) ուղևորափոխադրումների պահանջների (հաշվի է առնվում նաև առկա բողոքները)		
խախտումների բացակայություն	10	
մեկ խախտում	5	
մեկից ավելի խախտումներ	0	
9) հարկային պարտավորությունների		
խախտումների բացակայություն	10	
խախտումների առկայություն	0	

Ձև N 4

Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐԱՍՐԱՀԻ

Գնահատման հանձնաժողովի _____ _____ _____

(պաշտոնը) (անունը, ազգանունը) (մրցույթի անցկացման օրը)

NN ը/կ	**Ավտոբուսի**		**Տեխնիկական վիճակը**	**Գնահատականը**		
	մակնիշը	հաշվառման համարանիշը	համաձայն տեխնիկական զննության կտրոնի առկայության	արտաքին տեսքի	ուղևորասրահի	լրացուցիչ
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
1.						
2.						
3.						

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 5

Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԻ

_____ _____ 20 թ.
(մրցույթի անցկացման օրը)

NN ը/կ	Ավտոբուսի		Տեխնիկական վիճակը	Գնահատականը						Ներկայացված ավտոբուսների ընդհանուր միավորը	Ներկայացված ավտոբուսների միջին միավորը
	մակնիշը	հաշվառման համարանիշը	համաձայն տեխնիկական վիճակի կնքված պայմանագրի	պատկանելության իրավունքի	արտաքին տեսքի	սպասարկման	ընդամենը	լրացուցիչ			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.											
2.											
3.											

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 6

Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԵՎ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ

_____ _____ 20 թ.
(մրցույթի անցկացման օրը)

NN ը/կ	Վարորդի				Խախտումների առկայության			
	անունը, ազգանունը	ըստ աշխատանքային փորձի	ընդհանուր միավորը	միջին միավորը	լիցենզիայի պահանջների և պայմանների	ուղևորափոխադրումների պահանջների	հարկային պարտավորությունների	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1.								
2.								
3.								

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Ձև N 7

Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Ա Մ Փ Ո Փ - Թ Ե Ր Թ Ի Կ

_____ _____ 20 թ.
(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Գումարային գնահատականը			
	ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
1	**2**	**3**	**4**	**5**
	երթուղու անվանումը			

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 8

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

NN ը/կ	Մրցույթի անցկացման ամսաթիվը	Հայտի հանձնման ամսաթիվը	Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Երթուղու անվանումը	Հայտը ներկա-յացնողի ստորագրու-թյունը	Հայտն ընդունողի ստորագրու-թյունը
1.						
2.						
3.						
4.						

Ձև N 9

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ, ՓՈԽԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Երթուղու անվանումը	Հայկական փոխադրողը	Օտարորկրյա փոխադրողը	Տրանսպորտային միջոցի		Թույլտվություններ՝ տրված	
				մակնիշը	հաշվառման համարանիշը	ՀՀ լիազոր մարմնի կողմից	այլ պետության լիազոր մարմնի կողմից

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ